

գրէ՛. կոյս, յոյս, լոյս, որպէսզի լուսաւոր ըլլաւ, եւ Աստուած օրհնէ քեզ...
8. Պահպանել իւ, եւա գրութիւնները. (արին, կեանք, մեծութիւն):
Շնորհակալ ենք:

9. Եօ գրութիւնը արտայայտել եւ ձեւով (եռթն, արգեոք):
Աս չեղաւ, յարգելի Յանձնաժողով. ունեցածնիս արդէն այդ ւերկու բառերն ե այդ ձեւով. ասոնք փոխելէն ի՞նչ օգուտ պիտի տեսնէ Ասքանաղեան ազգը. իրաւ որ ցաւալի, արտասուելի բաներ կ'ընէք, եւ միեւնոյն ատեն խղճալի: Եօթնին ձեւը եւաթն, եւթն, արդեօփին՝ արդեաւք՝ արդիւք: Ըստ օրինի աւերը օ եղած՝ ինչպէս միւս բառերուն մէջ:

Հա՛յ տղայ, եօթն ալ՝ արդեօն ալ գուն ուղիղ ձեւով գրէ. այդ երկու բառերն են միայն որ վը գործածուին աշխարհաբարի մէջ. ինչո՞ւ պէտք: Գրաբարի մէջ կան Աեօփ, ձեօփ, զաւաջեօփ, եւ մեօթներորդ խառն հոլովման յոգնակի գործիականները. բարեօփ, տեղեօփ, տարեօփ, եւն., եւն.: Ասոնք աշխարհաբարի մէջ գործ չունին. երբ գրաբար գրես՝ այն ատեն ալ այս ուղիղ ձեւերը կը գործածես: Դուն մի՛ չեղիր ուղիղ ձամբէն:

Մարխասեանի յայտարարութեան գլխաւոր մասը հոս կ'աւարտի: Ապա կ'ըսուի. «Հիմնական տարակարծութիւն կայ բառասկիզբի յի նկատմամբ: Երկու գեղուցանող կ'առաջարկեն գրակի հոլով (հարմար, հօժար), իսկ երկուքը՝ յոլով (յարմար, յօժար)»: Միւրեւի հայ ընթերցող, այս գրութեանս նպատակն է պատուաստել քեզ, եւ քու երակներուդ մէջ պտնուած ճշմարիտ հայու ազնիւ արիւնին կարմիր պատերազմող գնդակները բոլոր ոտքի հանել՝ որպէսզի Երեւանէն գալիք ժանտախտէն չվարակուին... Արթուն եւ ըզ-

գո՛յշ. ունինք ժառանգութիւն մը անկապտելի, անկողոպտելի, անձեռնմխելի, անդրժեղի, նուիրակա՛ն. ո՛չ ոք իրաւունք ունի անոր դըպչելու. իմս է, քուկդ է, ամէնուս է՝ հաւասար. մեր թագն ու պարծանքը, մեր դանձը, որմէ պատկանեցին Լինկ-Թիմուրներէն մինչեւ Թաւաթները... Ես վստահ եմ վրադ. վաղուց՝ 1923-ին՝ կը գրէի. «...Պէտք է գիտնայ ոեւէ կառավարութիւն՝ բոլլեւիկ թէ մենչեւիկ՝ որ հայ ազգը իր կրօնքն ու լեզուն չի փոխեր, կեա՛քն իսկ հարկ ըլլայ վտանգել. եւ ամբողջ հայ ազգը գիտէ՝ մէ՛կ մարդու պէս, իբրեւ զմի այր, ծառանալ այդպիսի անանուն բարբարոսութեանց դէմ»... (Հայ Լեզուի Դասեր, էջ 64):

Մարգարէութիւնս կատարուեցաւ, հայ ազգը ծառայեաւ, ա՛յն աստիճան, որ այդ խաթարման եւ ապականութեան բուն կեղերունէն եւ ջերմ պաշտպաններէն փրթաւ վայնասունը. Մակինցեան սկսաւ բղաւել թէ «Արեղեանը մեզ յետ է տանում մինչեւ 12-րդ դարը» (ո՞ր 12-րդ դարը. Մակինցեանին խելքին է ակած անշուշտ. դար չկայ, երկիր չկայ այդ աղծապիղծ աշխարհակութեանց համար. պէտք է դուրս ելլել վարերէ, ժամանակներէ, տիեզերքէ, ծանօթ ու անծանօթ սահմաններէ, հին անկերպարան թոհ բոհին մէջ... հոն կարելի է գլուներին նմոյշներ...): Միւս ջերմ պաշտպանը Ա. Յովհաննիսեան ստիպուեցաւ իր գիրքը Երեւանի սահմաններէն արտաքսել՝ չիօթակ ընել՝ որպէսզի մեր ուղղադրութեամբ տպուի եւ հանրութիւնը կարգայ, որովհետեւ Երեւան տպուածը՝ տեղւոյն մկներն անգամ խորշեր էին կարգայէ...
Այս անգամ ալ նոյնը պիտի ըլլայ, սիրելի ընթերցող, եթէ հայ կառավարութիւնը չուզէ չարիքը արմատէն՝ կամովին բրել հանել:

